ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«30» հունվար 2020թ. № 174

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ԹԻՎ 207 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի ղեկավարի 2011 թվականի փետրվարի 4-ի թիվ 27 որոշման մեջ Արփիար Համլետի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի հասցեն «ք.Սպիտակ, Խնկոյան փողոց, թիվ 140» հասցեի փոխարեն սխալմամբ գրվել է «ք.Սպիտակ, Խնկոյան փողոց, թիվ 36», հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2304728 վկայականը և Արփիար Համլետի Պողոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Փոփոխություն կատարել Սպիտակ համայնքի ղեկավարի 2011 թվականի մարտի 14-ի «Արփիար Համլետի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին» թիվ 207 որոշման մեջ՝ որոշման 1-ին կետում գրված «36» թիվը փոխարինել «140» թվով:

2. Սույն որոշման 1-ին կետով կատարված փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունվար 30
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«30» հունիսի 2020թ. № 195

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԱՐԳԻՍ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի և Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Սարգիս Սահակյանի 2020 թվականի հունիսի 29-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Սարգիս Սահակյանին (ՀՎՀՀ 66000081) տալ «ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան 5» հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն 98,1 քառակուսի մետր մակերես) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2020 թվականի համար՝ ըստ եռամսյակների:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը ըստ եռամսյակների և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունիսի 30
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«30» հունիսի 2020թ. № 176

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՅԿ ԼԱՄԲԱՐՅԱՆԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հայկ Լամբարյանի 2020 թվականի հունիսի 26-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Հայկ Լամբարյանին (ՀՎՀՀ 66005799) տալ «ք. Սպիտակ, Վանաձորյան խճղ.» հասցեում գտնվող ավտոպահեստամասերի խանութում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն՝ մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունիսի 30
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«01» հուլիսի 2020թ. № 197

## ԱՌԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 10-րդ կետով, 13-րդ կետի «ա» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով, 48-րդ կետով, հաշվի առնելով, որ Վրույր Բաղրամյանին սեփականության իրավունքով պատկանող Առափնյա փողոցի վրա գտնվող 0,084 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը 28 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքը, 29,2 քառակուսի մետր մակերեսով հացատունը 2020 թվականի փետրվարի 18-ի Ըստ օրենքի ժառանգության իրավուքնի վկայագրի փոխանցվել է Մանվել Վրույրի Բաղրամյանին, հողամասի վրա 2006 թվականին ինքնակամ կառուցված 143,68 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տան պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, 2020 թվականի փետրվարի 18-ի Ըստ օրենքի ժառանգության իրավուքնի վկայագիրը, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը և Մանվել Վրույրի Բաղրամյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Մանվել Վրույրի Բաղրամյանին ժառանգության իրավունքով փոխանցված Առափնյա փողոցի վրա գտնվող 0,084 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 143,68 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Մանվել Վրույրի Բաղրամյանի սեփականության իրավունքը:

3. Մանվել Վրույրի Բաղրամյանին ժառանգության իրավունքով փոխանցված Առափնյա փողոցի վրա գտնվող 0,084 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին, դրա վրա գտնվող 28 քառակուսի մետր մակերեսով անասնաշենքին, 29,2 քառակուսի մետր մակերեսով հացատանը և 143,68 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը տրամադրել «քաղաք Սպիտակ,Առափնյա փողոց, թիվ 29» հասցեն:

4. Սույն որոշմամբ ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

5. Մանվել Վրույրի Բաղրամյանին.

1) համայնքի բյուջե վճարել 190 051 (հարյուր իննսուն հազար հիսունմեկ) ՀՀ դրամ օրինականացման վճար,

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտե:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հուլիսի 1
ք.Սպիտակ